

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՄԱԹՕՏՈՒԹԻՒՆ ԺՆՆԳԵԱՆ ԵՒ ԳԻՊՈՒԱԾՈՑ  
ՄԱՆՈՒԷԼ ՇԱՀԻՆԵԱՆ ԿԻՐՄԻՇԽԱՆՆԵՑԻ ՊԱՏՄԱԲԱՆԻՍ  
1835 Ի ՍՈՒՐԲ ԽԱԶ ՎԱՆՍ ՂՐԻՄՈՅ. \*)

Առաջին Հրատարումն իմ յանդամակցութենէ:

Ձեռնթափ եղեալ իմ ի յուսալի բարեկարգութեանց Աթոռոյն, պարտ անձին համարեցայ հրատարիլ յանդամակցութենէ նոցին, և ըստ կարգի Միաբանից մնալ անդ. վասն որոյ ետու նոցա զայս խնդիր:

«Առ Բարձրագոյն Հոգևոր Կառավարութիւն սուրբ էջմիածնի. ի Մանուէլ վարդապետէ ամենախոնարհ խնդիր: Ի սոյն թիւ նոյեմբերի 14 և Դեկտ. 3 մատուցեալ խնդրանացս, և ոչ միոյն ցարդ ունելով զբաւարարութիւն, Ամենախոնարհաբար վերակըրկնեմ զաղերս, արձակել զնուաստութիւն իմ յանդամակցութենէ, և շնորհել ինձ ի կարգս միաբանութեան խուց մի արտաքոյ Վեհարանին, Հասարակութեան Սեղանատունն ինձ բաւական է ապրուստ, ըստ որում ցանկայ հոգի իմ կոչիլ միաբան և աւելածուքան գործակալ և հրամանատու, որ զայն երեսուն երկու ամօք վարեալ եմ առանց օգտի հոգւոյ իմոյ, և յայս կոյս իմ գալստեան գլխաւոր պատճառն էր հրատարիլ ի հրամանատուութենէ, և հնազանդիլ հրամայողաց առանց գործոց ձեռնարկութեանց: Յուսամ բարձրագոյն կառավարութիւնդ ունի մարդասիրել առ իս, և ոչ զրկել յայսպիսի բաղձանաց իմոց, որով կարացից զմնացեալ կեանս իմ ծառայեցուցանել հաստչին և պաշտօնի իմոյ: (Իսկական գրեցեալ է) Մանուէլ վարդապետ: Ի 1828 Դեկտ. 29 ի սուրբ էջմիածին № 42:

Սովաւ երևի թի ցարդ երեքկնեցան խնդրագրութիւնք իմ, և եղեն անօգտակարք ինձ, զի տակաւին կասկածէին վերադարձման ներսէս Արքեպիսկոպոսի, և մեք յանկարևորութենէ արձակման մերոյ, կենամաշ մտատանջութեամբ լռեալ սպասէաք այլում պատշաճ և դիպուկ ժամանակի:

\*) Տես «Արարատ» 1946 թ. Յունուար-Փետրուար էջ 96—104:



## Անկանոն հաշուառութիւնք Սինօթական կառավարութեան.\*)

Իբրև անդորրացան միտք գահերէց Սրբազան Հարց. և ընդ աշխատաւոր Միաբանից, թէ ներսէս Արքեպիսկոպոսն փութով ոչ վերադառնայ Սթոն կոյս:

Ի 1829 ամի ելևճուտան սկսան օր ըստ օրէ հաւասարել ըստ օրինակի առաջին կառավարութեանն, ի հիացումն տեսողաց և լսողաց: Քանզի որպէս գրեցաւ ի 1827 և ի 1828 ամաց որպիսութիւնք, որք ի պատճառս պատերազմական զօրաց, զինուց և զբաստուց ոտնակոխութեամբ արգասաւոր դաշտաց և հովտաց՝ պակասեցան բերք երկրին զանազան իրաւացի պատճառովք, զի կանխաւ ամբարեակքն յափ(շ)տակացն ի զօրաւորաց, նորոգ սերմանեակքն, ոտնակոխ եղին և կէրք անասնոց, մշակող անձինք ցիր և ցանք փախուցեալք, ոչ կարացին սերմանել. ժողովուրդն գաղթեցեալք՝ լցին զդաշտս զիեցիկ մանկամբք և ոչ ցորենովք: Նմին իրի եհաս լիտրն նոցին հացից ի 18. շահիս. իբր մէկ հօխայ. կամ երեք ֆունթն. 40. փարա: Յայնպիսում ժամանակի Աթոռն որպէս գրեցաւ, բացի իւր միաբանութեանց, և մշակաց, ևս երկու հարիւր աւելի արանց տարեկան ուտելիս. և շորեղէնս հատոյց: Նաև չորս հազար թուման պարտք վճարեաց:

Իսկ այժմ ի 1829 ամի Տեանն, խաղաղութեամբ գայլ ընդ գառին մակաղին, Հզօր Տէրութեան զօրաց հացք ընդ ծով և ընդ ցամաք գետօրէն զեղանին, ամենայն ոք զվարս վաստակոցն ամբարեալ է ի տունս, այն գաղթականք զվաստակս ձեռաց իւրեանց վայելեն: Աթոռն փոխանակ գնելոյ, ինքն զյառաջագոյն պարտք տուեալսն ժողովեալ վաճառէ, բամպակ, բրինձ և ցորեան: Ուր թէ և հասարակապէս գին հացեղինաց երրորդ մասանց մինն եղև, զի տասն և ութ շահով տրեցեալն, այժմ վեց շահով տան, նոյնպէս և այլ ինչք:

Բայց Աթոռային ծախսք, ի 27 և ի 28 ամաց, բացի ուտելեաց՝ զորս երկիր իւր և վիճակքն մատակարարին հանապազ: Միայն երթեակ պատուաւոր անձանց, ուխտաւորաց, հիւրոց և Աստիճանաւոր գործակալաց՝ չայ, շաքարի, և այլ պիտոյից, Միաբանից տարեկան շորեղինաց, մշակաց վարձուց, այգեաց և

\* ) Նախորդ գլխով վերջանում է † հ. Բարդէն վարդապետի արտադրութիւնը բնագրից: Թէեւ հանդուցեալի ձեռքով, ամբողջի արտադրութիւնը պատրաստ էր, ինչպէս ինքն իւր կենդանութեան ժամանակ ասած է եղել շատերին, սակայն մահից յետոյ չերեւեցաւ այդ մասը նորա թղթերի մէջ: Չկամենալով կիսատ թողնել հանդուցեալի սկսած գործը՝ արտադրելով բուն իսկ ձեռագրից «Պատմութեանս» շարունակութիւնը տպագրութեան ենթյանձնում, գործն ամբողջացնելու մտրով:



գրաստուց պիտոյից և այլ այսպիսի հարկաւորութեանց տարեկան ծախուց գումարաց գումարն, ի 27-ին, բոլոր եղև վեց հարիւր յիսուն և հինգ երևանու թուման, որ է երկու հազար, վեց հարիւր քսան մանէթ:

Երկրորդ ամի, ի 28-ին, այնպիսի բոլոր ծախուց գումարաց գումարն, տնտեսական կառաւարութեամբ, և յակնածութենէ ներսէս Արք եպիսկոպոսին, թէև բացակայ՝ բայց առնէին տակաւին և նմա տալ գտարեկան հաշիւն, գտանեցաւ բոլոր գումար ծախուց, չորս հարիւր ութսուն և եօթն թուման, որ է հազար ինն հարիւր քառասուն և ութն մանէթ, յայտ է թէ պակաս քան զառաջին ամն, որպէս և արժան իսկ էր, ըստ որում յառաջին ամն ըստ ամի դատարկացել էր Աթոռն ի հարկաւոր պիտանաւորաց, նաև իսկ սեպական ըստոյի պարագայից, զորս պատրաստեցին, և հետևեալ ամացն իրաւամբ պարտէր պակասիլ ծախուցն, որպէս և եղևն իսկ:

Բայց սակայն, ի 1829 թուականի սկզբանցն ցաւարտ տարւոյն, որ քաջ գիտակ էին ներսէս Արք եպիսկոպոսի արգելեալ մնալն ի Պէզարապիայ, հոգի առեալ ամենեցուն, բացի այլ ամենայն անկարգութեանց, զորս կարգ պատմութեանցս ցուցանէ ուշիւ ընթերծանաց: Միայն ըստ վերոյ գրեալ եղանակի ծախուց գումարաց զգումարն հասուցին մէկ հազար հինգ հարիւր ութսուն երևանու թուման, որ լինի վեց հազար երեք հարիւր քսան մանէթ, որ է իբր եռապատիկն առաջնոյ ամի ծխուցն: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ:

**Պատճառք այսպիսի ել եւ մտից:**

Յետ վախճանի Դուկաս Հայրապետի, տարածայնութիւնք ընտրութեանց յաջորդ Հայրապետաց, կողմնականութիւնք գահերիցանց, ուկնդրութեամբ կրթութիւնք անցնիւրոց սպասաւորաց: Երկարութեամբ ժամանակաց, այսինքն, ի 1797 թուականէ մինչև ի 1829 ամն, երեսու(ն) երկու ամաց կրթականութեամբք, ծերագոյնքն վախճանեալք, որք գիտէին շահ և զերկիւղ ըստ ամօթանաց, թէ հեղինակութեամբ դաստիարակաց և թէ երկիւղածութեամբ ընթերցեալ սուրբ մատենից: Ստորագրեալք նոցին, որք բարեաւ մնայ ասացեալ էին մանկական սուրբ ուսմանց, և արձանացեալք ի տեղի Աղայից իւրեանց. (որպէս գրեցաւ յԱղէտ Գիտելեացն):

Որք ունէին կարգ իշխանութեան ի միջի իւրեանց, բացի Հայրապետէ և պարագայից նորին, տէր Տեղապահ, Աւագ լուսարար, Աթոռակալ, Գանձապետ, Հիւրընկալ քէրվանպաշի, Ժամօրհնող: Այսոքիկ են գահերէց եպիսկոպոսք: Եւ իւրաքանչիւրք, բացի սարկաւագ կամ մոնթ սպասաւորաց, ունին կամ երեք արբանեակ արեղայս, որոց գահերէցքն կոչին Աղայք, և ինքեանք պաշտօնակատարք:



Աթոռային արտաքսական արդիւնք յառաջ գային ի նուիրակաց, և ի ժողովարարաց. վասն նուիրակաց ասացեալ եմք յԱղէտ Գիտելեացն: Վասն ժողովարարացն, որք կոչին իւղի և բանրի նուիրակք: Ահա այս Աղայեատեար Աբ[ե]ղայք գնան յայնպիսի պաշտօն:

Ներսնային արդիւնաւորութեան առարկայք են վէքիլական գործք, որք են վերակացութիւնք ամենայն վար և ցանից: Կարգադրութիւնք այգեաց՝ որք կոչեն կատեպան պաշը: Վերակացութիւնք խաշանց, պաճարեղենաց և անասնոց. հոգածուք ըմպելեաց անուանեալք Շիրաճի: Հրամաեողք խահարարաց՝ կոչեցեալք տնտես. պահպանողք զանազան նիւթեղինաց, առձայնեալք Վէքիլ խարճ: Այս ամենայն առարկութեանց խնամօղ վերակացուք են նոյն Աղայեայտէր Աբեղայք և Սարկաւագքն: Որք կարևորք էին չորս աշխարհական վարձեալ անձամբք զայս ամենայն պաշտօն բովանդակել, տալով իւրաքանչիւրոցն հարիւրական մանէթ վարձս և ճշտիւ պահանջել զհաշիւս: Բայց սրբազան Աղայք զարեղայս և զսպասաւորս իւրեանց զրկեալ յուսմանց և ի գիտութեանց, ջերմեռանդք են յայս պաշտօն զնոսա կացուցանել. և ո՞վ է որ ի սոցանէ հաշիւ ըստ օրինի խնդրել կարացէ: Առհաւատչեայ օրինակ մի գրեցից աստանօր ի յագուրդ յետախոյզ բանասիրաց:

Յարարատեան դաշտի Աթոռային հինգ ջրաղացք կան, յորս մերձակայ գիւղականք աղան զհացեղէնս: Այս ջրաղացից վերակացու էր՝ ժողովական կառավարութեան չորրորդ անդամ Գեղամեան Ստեփաննոս արք եպիսկոպոսի Սահակ\*) արեղայն: Ի լրութեան տարւոյն, որ գանձպետ Աթոռոյն էր վեցերորդ անգամ Յովսէփ վարդապետն, գրաւոր հարցումն արարի նմա այսպէս:

«Բարձր արժանապատիւ Յովսէփ հայր, խնդրեմ անցեալ «տարւոյ լրութիւն հինգ ջրաղացից պակաս պրատից համար բոլոր «որքան խարճի փող տուեալ ես, և տարեկան որքան շահատ ստացեալ ես, այս թղթի վերայ գրեալ ինձ վերադարձուցանես. «Մանուէլ վարդապետ: 1830. յունվ. 10.

«Պատասխանի. ամեն ջրաղացից բոլոր տարեկան ծախսն է. «10. թուման. շահատ, այսինքն արդիւնք, 38 սոմար, ֆիյ 11 թուման. նաև 100 սոմար վանքի շահատն է»:

Կամի ասել, թէ բացի վանքի քաշած ցորենիցն տասնևմէկ թուման արդիւնք ստացեալ եմ ի վերակացու Սահակ\*) վարդապետէն և տասն թուման մասրաֆ և մսխ արարեալ եմ ի ձեռն նորա, յորոց յաւելանայ միայն չորս մանէթ ի հինգ ջրաղացից տարեկան արդիւնք:

Այսպիսի հաշուատութեանց կամէր Սրբազան ժողովոյն և

\*) Բնադիրն ունի «Գրիգոր արեղայն» յետադայ մի գրիչ Գրիգոր անունը ջնջել եւ երկու տեղն եւս ուղղել է «Սահակ»: Ծան. Տ. ծ. վ.



իմ նուաստութեան ստորագրեցուցանել տարեկան ել և մտից  
ուղղութեանն:

**Առաջին գնայն Կարբեցի Յօհաննէս Արքեպիսկոպոսին  
ի Թիֆլիզ առ Պասկելիչն:**

Յաւուրսն յայնոսիկ Ղրաֆ Պասկելիչ Մեծ Կոմս և կուսակալն  
իբրև դարձաւ յաղթանակութեամբ ի Կարնոյ ի Տփլիսիս, Աթոռային  
կառավարութիւնն պատշաճ դատեցաւ առաքել ի դիմաց Հայրապե-  
տի զերկու անձինս ընծայատարս շնորհաւորութեան նամակաւ:

Նախապէս ընտրութիւն արար ժողովն զԿարբեցի Յօհաննէս  
Արք Եպիսկոպոսն և զիմ նուաստութիւն ընդ նմին առաքել, բայց  
յառաջագոյն գրեալ և ծանուցեալ էին ի Քիշնև Ներսէս Արքեպիս-  
կոպոսին, սպասէին կամեցողութեան գրոյն:

Այս համբաւ հասեալ ի Թիֆլիզ՝ հակառակօղք Ներսէս Արք  
Եպիսկոպոսի, հասուցեալ յականջս Մեծ Կոմսին, և թելադրու-  
թեամբ նորին, կուսակիցք յիշեալ Յօհաննէս Արք Եպիսկոպոսի,  
մանաւանդ քեռորդի նորին, Գալուստ Ելիմրզեանն, ստէպ գրու-  
թեամբ առ քեռին իւր, յորդորէր փութով գնալ անդ:

Թէ զինչ էին խորհրդական գրութիւնք սոցա առ միմեանս,  
կատարումն գործոյն ի տեղուջ իւրում ինքնին ցուցանէ: Աստ  
այս ինչ միայն կայ գիտել, թէ փոփոխութիւն առաջին ընտրու-  
թեան արարեալք, ի տեղի մեր զՍտեփաննոս վարդապետն Արղու-  
թեանց էառ ընդ իւր յիշեալ Արք Եպիսկոպոսն: Եւ սպասեալ գրու-  
թեան իւրեանց ի Ներսէս Արք Եպիսկոպոսէ եկեալ եհաս յԱթոռն,  
զգուշութեամբ վարիլ յայն գործ, առանց երևելի առն դեսպա-  
նութեան, շնորհաւորութեան գրել զգիր, և ոչ զոք Արքեպիսկոպոս  
առաքել:

Ընթերցեալ երդմամբ ուխտագիր Եփրեմ Հայրապետի զայն  
գիր Ներսէս Արք Եպիսկոպոսի, որ քարոզէր առանց կամաց նո-  
րին ոչ ինչ գործել, փութապէս յերկրորդի աւուրն, զյիշեալ Յօ-  
հաննէս Արք Եպիսկոպոսն ընդ Արղութեանց Ստեփաննոս վարդա-  
պետի ճանապարհորդեցին դէպ ի Տփլիսիս, և տակաւին հարկաւոր  
գրութեանց ոչ հասանելով՝ մինչև ցերբորդ օրն լրացուցեալ՝ սուր-  
հանդակաւ ի քառանթիրն Կէռկէռի հասուցին առ դեսպանս իւ-  
րեանց:

Այս դեսպանութիւն եղև նշանադրութիւն կաթողիկոսութեան  
իւր ինքեան Կարբեցի Յօհաննէս Արք Եպիսկոպոսին, Հրաժարումն  
Եփրեմ կաթողիկոսի և ընկճումն Ներսէս Արք Եպիսկոպոսի, որք  
զկնի տեսանին:

(Շարունակելի)